

# ԽՆԿՈ Ապեր

(Աթաբեկ Հովհաննեսի Խնկոյան)

1870-1935



Գրել է բանաստեղծություններ, պոեմներ, հեքիաթներ, լեգենդներ, առակներ:

Խնկո Ապերը հայկական դպրոցների համար կազմել է մայրենի լեզվի դասագրքեր՝ «Մեր դպրոցը», «Կարմիր արև», շուրջ 120 ինքնուրույն և թարգմանական գրքերի հեղինակ է: Առավել հայտնի են նրա «Աղվեսն ու արջը», «Գող մաքին», «Առակներ», «Մրգաստան», «Հեքիաթներ ու պատմվածքներ» ժողովածուները:



# Գող մաքին

Կատուն ընկավ դռնեդրուտ,  
Գազաններին տարավ լուր,  
Թե, չեք ասի, ես տեսա,  
Դեռ լավ էր, որ շուտ հասա,  
Վախսկոտ մաքին՝ դեռ մի ծին՝  
Խիստ անպատվեց առյուծին:  
Էն խոտից, որ դիզած է,  
Փշից-մշից զտած է,  
Որ պիտ լինի անկողին  
Գազաններիս պահողին,  
Գողցավ մի փունջ գիտ մաքին,  
Տարավ տվեց իր ձագին:  
- Երբ կամ ինչպես տեսար դու,  
Խանում-խաթուն մեր կատու,-  
Ասավ արջը ծաղրելով,  
Կատվի մեջքը շոյելով:  
- Դու ինչո՞ւ ես անհամբեր,  
Մեր բոլորի մեծ ապեր.  
Ես իմ տեսածն եմ ասում,  
Սուտ բան երբեք չեմ խոսում:

Հենց երեկ էր, որ մաքին,  
Մատաղ նրա դմակին,  
Ինձ բանի տեղ չդրավ,  
Առավ խոտն ու ղու տարավ:  
- Այ՞, այ՞, էղանոս է,  
Մեր կատուն ուղղախոս է,  
Պիտ պատժվի էնպեսը,-  
Վրա բերեց աղվեսը:  
- Ըմբռստ մաքու էդ քայլը,-  
Կարծիք հայտնեց ծեր գայլը,-  
Պիտի դատենք միասին,  
Թե հավատանք աղվեսին:



- Ի՞նչ ես ասում, այ քեռի,  
Սուտ ասողը քրքրվի:  
Եդ ինչնիր ես մտածում,  
ինձ ինչու՞մն ես կասկածում.  
Է, ինչ կուզեք դուք արեք,  
Թեկուզ ողջը սուտ հանեք,  
Առյուծի մոտ ես կերթամ  
Բանը մեկ-մեկ կկարդամ:  
Էլ չզսպվեց աղվեսը,  
Կրունկն արավ դեա դեսը,  
Երկար պոչը թափ տալով,  
Թոչկոտելով, ծափ տալով,  
Գնաց գտավ արքային,  
Անտառումը, իր գահին,  
Դալար ճյուղեր հովանի,  
Որ արևը զոռ չանի:  
Հետը տարավ նվերը՝  
Մի զոյգ հնդկահավերը,  
Տարավ դրեց առաջին,  
Ինքն էլ նստեց իր պոչին:  
- Պարո՞ն աղվես, էս խերի է...  
- Առյո՞ւծ արքա, ինձ ներե,  
Էս աշխարհը փոխվել է,  
Ահ ու երկյուղ թռել է,  
Մի գողություն, չես ասի,  
Ապա պատմեմ, ինձ լսի:  
Էս խոտից, որ դիզել ենք,  
Կըղկըղել ենք, գզել ենք,  
Որ ծմունը լիորեն

Գցենք քո տակն ու վրեն,  
Գողցել, տվել է իր ձագին  
Ժաժան գլուխ գող մաքին:  
- Հաշիվ թող տա ըմբոստը,  
Կամ վեր դնի իր փոստը:  
- Այն, այն, տեր արքա,  
Գործած մեղքին պատիժ կա.  
Եթե ներես այս անգամ,  
Էն գող մաքին անզգամ,  
Երբեք չի գա Էլ կապի,  
Խոտը կուտի, կպարպի:  
Առյուծ արքան էդ մասին  
Էսպես ասաց աղվեսին.  
- Որքան կենդանիք որ կան,  
Թող վաղը շուտ ինձ մոտ գան,  
Մենք բոլորս միասին  
Խորհուրդ անենք էդ մասին,  
Թե ինչ պատիժ է հարմար  
Էն ըմբոստ մաքու համար:  
Աղվեսն ելավ ծոմովեց,  
Հինգ-վեց անգամ խոնարհվեց,  
Լիզեց տիրոջ թաթիցը  
Ու դուրս թռավ մոտիցը:  
Դեռ չեր ցրվել մառախուղ.  
Առավոտյան շատ կանուխ  
Կենդանիներն անտառում  
Գզվում էին, գոռգոռում:  
Երբ արևը դուրս եկավ,  
Ալ աբրեշում շոր հագավ,



Շողքը գցեց սարերին  
 Ու կյանք տվեց անտառին,  
 Այյուծն իջավ իր գահից,  
 Ողջը լոեց իր ահից:  
 - Իմ գազաններ, լսեցեք,  
 Մեկ-մեկ, հերթով խոսեցեք,  
 Ամեն մեկը ձեզանից  
 Թող մտածի իրանից,  
 Կարծիք հայտնի՝ թե ինչպես  
 Պատժենք մաքուն սևերես,  
 Որ սրբազան դեզիցը  
 Խոտ է տարել դրսիցը:  
 Էսպես խոսեց առյուծը,  
 Գազանների էն մեծը:  
 Առաջ եկան իշանը,  
 Զոզոնցն էր նշանը,  
 Թոփ-թոմարի խոսեցին,  
 Բայց ոչինչ էլ չասացին:  
 Լավ էր, եկավ վարազը,  
 Բոնեց էշերի հազը,  
 Վարազից խիստ վախեցին,  
 Ականջները կախեցին:  
 Օգտվելով էր բանից,  
 Շիլ նապաստակն իր կողմից.  
 - Ես չեմ խոսում երկար-ձիգ,  
 Ահա համեստ իմ կարծիք.

Մաքուն պատիժ թող լինի,  
 Որ նա բոստան չմտնի,  
 Կաղամբ, գազար չկրծի,  
 Այլ դաշտերումն արածի:  
 - Կորի՛, ծուռ աչք դու շլիկ,  
 Ծնածդ օրից անվարտիք...  
 Թազին քաշեց կարճ պոչից,  
 Իսկ կատուն էլ՝ սուր դնչից:  
 - Թե որ բանը ինձ մնա,  
 Մեր ամենի տեր արքա,-  
 Ասավ գայլը ալսոր,  
 Միս ու արյան միշտ սովոր,-  
 Ու քանի որ մենք մեզ ենք,  
 Բերենք գողին մի զգենք:  
 Հերթը հասավ արջ ապորը,  
 Քիչ հիվանդ էր նա էդ օրը.  
 - Չէ՛, ձեռք չտանք գող մաքուն,  
 Միայն ամեն իրիկուն  
 Պարտավորվի՛ մեզ համար  
 Մեղը բերի անդադար:  
 - Զայն եմ տալիս նաև քեզ,  
 Մեր խելացի, ժիր աղվես:  
 - Որովհետև բրդոտը  
 Գողացել է քո խոտը,  
 Ուստի արդար կլիներ  
 Լոկ քեզ բաժին նա լիներ...


Էստեղ արքան՝ խիստ ու մթին,  
Դարձավ կանգնած ժողովրդին.  
- Մեր աղվեսի այս խորհուրդը  
Ընդունու՞մ է ժողովրդը:  
Եվ ամենքը խոնարի ու լուռ  
Ընդունեցին միահամուռ:



# Փեսացու Մուկը

Մուկը ուզեց  
Ամուսնանալ  
Եվ հզորին  
Փեսա դառնալ:  
Նրան ասին,  
Որ աշխարհում  
Արեգակն է  
Միայն հզոր:  
Մուկը տեղից  
Վեր է կենում,  
Իրեն կոկում  
Ու փառավոր  
Գարնան մի օր,  
Զերմ առավոտ  
Ուղիղ գնում  
Արևի մոտ:  
Գնում, ասում.

- Բարձ, բարձ,  
Էս աշխարհի հզոր արև.  
Քո դստրիկը  
Հեզիկ-նազիկ,  
Հեզիկ-նազիկ,  
Ուկեմազիկ,  
Տուր ինձ՝ տանեմ,  
Անեմ հարսիկ:  
- Ես որտեղի  
Հզորն եմ, որ...  
Տես, էն ամպն է  
Ինձնից հզոր,  
Մին էլ տեսար  
Արագ-արագ,  
Կտավի պես  
Երկար-բարակ  
Տարածվում է,  
Կապուտակում



Վարագույրով  
Դեմքս ծածկում,-  
Արեգակը  
Մկանն ասավ:  
Մուկը վազեց  
Ամպին հասավ.  
- Ա' իզոր ամպ,  
Բարև, բարև,  
Ու՞ր ես գնում  
Վերև, վերև:  
Քո դստրիկը  
Հեղիկ-նազիկ,  
Հեղիկ-նազիկ,  
Ոսկեմազիկ,  
Տուր ինձ՝ տանեմ,  
Անեմ հարսիկ:  
- Ես որտեղի՞  
Հզորն եմ որ...  
Ա', քամին   
Ինձնից իզոր:  
Որ բարկացավ,  
Էլ գութ չունի,  
Ո՛ւր ուզենա'  
Ինձ կտանի:  
Նա ինձ կանի  
Փաթիլ-փաթիլ  
Ու կքամի  
Կաթիլ-կաթիլ:

Մուկը վազեց  
Հասավ քամուն.  
- Քամի, - ասավ,  
Հզոր ես դուն,  
Ամպին կանես  
Փաթիլ-փաթիլ  
Ու կքամես  
Կաթիլ-կաթիլ:  
Քո դստրիկը  
Հեղիկ-նազիկ,  
Հեղիկ-նազիկ,  
Ոսկեմազիկ,  
Տուր ինձ՝ տանեմ  
Անեմ հարսիկ:  
- Ես եմ իզոր...  
Երանի քեզ.  
Չէ, չէ, մկնիկ,  
Դու խաբվել ես:  
Զորեղ տեսնես  
Դու սև գոմշին,  
Կուզեմ պոկեմ,  
Բերեմ կաշին,  
Բայց որտեղից...  
Ինչի տեր եմ,  
Որ ուզածս  
Պոկեմ, բերեմ:  
Մուկը դիմեց  
Գոմշին արտում

Հուծ քաշելիս,  
Հոգնած, տրտում.  
- Գոմեց,- ասավ,-  
Դու հզոր ես,  
Դու հզոր ես,  
Ուժի տեր ես.  
Քո դստրիկը  
Հեղիկ-նազիկ,  
Հեղիկ-նազիկ  
Ոսկեմազիկ,  
Տուր ինձ՝ տանեմ,  
Անեմ հարսիկ:  
- Ես եմ հզոր  
Եվ ուժի տեր...  
Որ էդպես է,  
Բա էս անտեր  
Գութանն ի՞նչ է  
Ինձ չարչարում  
Ու իմ ուսին  
Ցավ պատճառում:  
Գոմշին թողեց,  
Վազեց գնաց.  
- Հզոր գութան,-  
Ասավ,- մի կաց...  
Օրոր-շորոր  
Արտ ես վարում,  
Հողում խոր-խոր  
Ակոս շարում,  
Քանիք - քանիք

Հուծ ու լծկան  
Ճիպոտի տակ  
Քեզ քաշող կան:  
Քո դստրիկը  
Հեղիկ-նազիկ,  
Հեղիկ-նազիկ,  
Ոսկեմազիկ,  
Տուր ինձ՝ տանեմ,  
Անեմ հարսիկ:  
- Ուժիս գովքը  
Այլ կերպ կտան.  
Հզորն ո՞վ է,  
Էն էլ գութան...  
Որ հզոր եմ,  
Ինչի՞ համար  
Հողի միջին  
Մութ ու խավար՝  
Ինձնից ուժեղ  
Արմատ ու սեզ  
Ինձ ջարդում են  
Ուզածի պես:  
- Արման, արման,  
Հզոր արմատ,-  
Ասավ փեսա  
Մուկը մի մատ,-  
Դու շատ զռ ես,  
Դու հզոր ես,  
Հզոր գութան  
Դու կկոտրես:

Քո դստրիկը  
 Հեղիկ-նազիկ,  
 Հեղիկ-նազիկ,  
 Ուկեմազիկ,  
 Տուր ինձ՝ տանեմ,  
 Անեմ հարսիկ:  
 - Արմատը՝ նվ,  
 Հզորը՝ նվ,  
 Վեր կաց գնա  
 Դու մկան քով,  
 Այ ձեր ցեղը  
 Շատ հզոր է,  
 Գետնի միջին  
 Բուն կփորե,  
 Կորոնե  
 Սեզ ու արմատ,  
 Կուտե, կուտե  
 Մեկ-մեկ, հատ-հատ:  
 Մուկը վազեց  
 Մկնուիու մոտ:  
 - Նանի, – ասավ  
 Մեր իին ծանոթ, –  
 Այ, արմատը  
 Խոսքիս վկա,  
 Քեզնից հզոր  
 Չկա, չկա,  
 Քո դստրիկը  
 Հեղիկ-նազիկ,  
 Հեղիկ-նազիկ,

Շեկլիկ մազիկ,  
 Տուր ինձ՝ տանեմ  
 Անեմ հարսիկ:  
 - Բարով, մկնիկ,  
 Բարով տեսա,  
 Ես քեզ զոքանչ,  
 Դու ինձ փեսա:  
 Իմ դստրիկը  
 Հեղիկ-նազիկ,  
 Շեկլիկ-մեկլիկ,  
 Շեկլիկ մազիկ,  
 Կտամ ես քեզ,  
 Արա հարսիկ:  
 Մուկը մկան  
 Արավ փեսա.  
 Էս աշխարհի  
 Օրենքն է սա:



# Ժանտախտ

Կենդանյաց մեջ խիստ ժանտախտ էր,  
Չմեռնելը շատ մեծ բախտ էր,  
Ճգնաժամ էր օրհասական,  
Ու ձայն տվեց առյուծ արքան.  
- Կենդանիներ, ինչքան որ կան,  
Թող հավաքվեն, գահիս մոտ գան:  
- Է, արքայի հրաման էր,  
Ժանտախտի պես դաժան բան էր.  
Սարսուո ընկավ դաշտ ու անտառ,  
Գազանները լեղապատառ՝  
Մեծ ու փոքր, բազմատարազ,  
Արջ ու հովազ,  
Վագր ու վարազ,  
Զար բորենի, աղվես ու գայլ,  
Մեկ էլ էշը վսեմափայլ,  
Հավաքվեցին առյուծի դեմ:  
Արքան գոչեց.- Ես ձեզ հետ եմ,  
Իմ իշխաններ, ես լավ գիտեմ,  
Որ ձեր սրտից արյուն կերթա.  
Եթե բանը էսպես գնա,  
Էս ժանտախտին, ականջը խով,  
Ամբողջ ցեղով կգնանք կով:  
Ինձ լսեցեք, բան եմ ասում.  
Ում մեղքիցն է էսպես ցասում  
Աշխարհին առավ ցեղիս լացը,  
Հա վառվում է չորս ու թացը:

Եկեք, խնդրեմ, անկեղծորեն  
Խոստովանեք՝ հրս անօրեն  
Քան է բռնել,  
Մեծ մեղք գործել:  
Մեկն ես, որ ձեր գիշավորն եմ  
Ձեր ամենից մեղավորն եմ,  
Քանի անմեղ գառ ու ոչխար  
Ուղարկել եմ մթին աշխարհ,  
Ու հովվին էլ լեղապատառ  
Ինչպես արել ճոթ ու պատառ:  
Սա իմ մեղքն է, ճիշտն եմ ասում  
Որ բերել է էսպես ցասում:-  
Մեղքերն ասին արջ ու հովազ,  
Չար բորենին, վագր ու վարազ,  
Հետո և գայլ,  
Վերջը էշը վսեմափայլ  
Ասավ.- Սա է միակ մեղս,  
Արտի մոտով անցած տեղս,  
Հակառակ է չարը բարուն,  
Ես մի բերան զարկի գարուն...  
Աղվեսն էստեղ՝ լսեց, լսեց,  
Ուտքի կանգնեց, մի ճառ խոսեց՝  
Էնպես արդար,  
Էնպես ճարտար,  
Որ պիտ հիշվի հայ դարեդար.  
- Առեք,- ասավ,- սովորան ու խան,  
Առեք նույնպես և իմ մեղան.  
Ես ամենից մեղավոր եմ,  
Քայց թե կացեք՝ տեղավորեմ:

Մեր արքան վես,  
Մեր արքան հեզ  
Խոստովանեց իր մեղքը մեզ.  
Բայց թե խղճով եկեք դատենք,  
Մեղքը վարձքից խելքով զատենք:  
Լինի արքա,  
Սոված ման գա,  
Չուտե՞ ոչխար...  
Փուլ գան, աշխարհ...  
Ոչ, Տե՛ր Արքա,  
Ինչ ոչխար կա,  
Քեզ է տրված փայ ու բաժին,  
Ա՛յ, ինչ ասեմ ես Էն գժին,  
Էն անտաշին,  
Կոպիտ էշին.  
Գարու կանաչ արտը պոկե,  
Մեղքն ու վարձքը նա չջոկե  
Ու մեր ցեղին այսպես պատժե՞,  
Չէ, պետք է դա կյանքով տուժե...  
Տեղից թռան գազանները,  
Դունչ ու թաթիկ լիզանները,  
Խելոք էշին գետնին դրին,  
Քթից բերին կերած գարին:

# Վատ ընկերը

Մի անգամ  
Առյուծ արքան  
Մոնչում էր կողի ցավից.  
Գազանները ամեն կողմից  
Եկան հիվանդ արքային տես,  
Բայց մեջերնին չկար աղվես:  
Էդտեղ մեկ էլ  
Մի պառավ գել  
Ասաց.- Արքա,  
Ախր ինչ կա,  
Որ աղվեսը՝


Հաճուճ-մաճուճ  
Թիգ ու կեսը,  
Քեզ չի հարգել,  
Տես, չի եկել:  
Ցավը թողած՝  
Արքան գոռաց,  
Թե. Հայ, թոեք,  
Էն ըմբռստին  
Ոտս բերեք:  
Հինգ, վեց  
Գազան  
Ելան, հասան,  
Էն աղվեսին  
Մի կերպ գտան,  
Պատճառն ասին,  
Բերին ատյան:



Արքան գոռաց.  
- Ո՞ր ես, մեռած...  
- Ասեմ ձեռաց,-  
Աղվեսն ասաց.-  
Տեր վեհափառ,  
Խնդիրս առ.  
Որ լսեցի՝ դու հիվանդ ես,  
Էլ ինչ ասեմ, ինձ հո գիտե՞ս,  
Ինչպես գլխիս կրակ վառած  
Եվ պատանս էլ թևիս առած  
Հայ էստեղը,  
Հայ էնտեղը,  
Վերջը գտա  
Ցավիդ դեղը:  
Գելի մորթին արա մուշտակ.  
Միսը շորվա խմիր տաք-տաք:  
Քրտնեց կողդ,  
Կանցնի դողդ:  
Որ չտվեց էսպես թելին,  
Իսկույն գետնին դրին գելին:  
Արքան հազավ գելի կաշին,  
Միսը կերավ նախաճաշին:  
Քրտնեց կողը,  
Անցավ դողը,  
Մեջտեղ գնաց  
Զրպարտողը:

# Մկների ժողովը

Սով էր, սով էր Մկստան,  
Կատվի ձեռքից լկստան,  
Գզիրն ընկավ դոնեդուռ,  
Ել չթողեց տուն, կտուր,  
Զահել, ահել գեղովի,  
Զոջերին ջոկ, տեղովի  
Կանչեց, բերեց ժողովի,  
Թե ինչ անեն, որ կատվեն  
Մի հնարքով ազատվեն:  
Եկան գյուղի ջոջերը,  
Երկար, բարակ պոչերը,  
Մասնակցեցին խորհրդին,  
Մի մուկ խոսեց իր հերթին.  
- Լսեք, մկներ ցեղակից,  
Չունեմ որդի, կողակից.  
Ես մի անտեր ծերուկ եմ,  
Բայց պատվավոր մի մուկ եմ.  
Պակսեց ուժը իմ ոտի,  
Պետք է մեռնեմ անոթի.  
Սովն է չոքել դռանը,  
Ա'խ, մոռանը, մոռանը,  
Վեր է ընկել մառանը,  
Ինչքան ասես նազ անի,  
Ստից սատկի, տազ անի,  
Մուկ տեսնելիս խաղ անի,  
Գլխից բռնի, կախ անի,



Թաթովը տա, խաղ անի,  
Ուտի, քեֆը չաղ անի.  
Էսպես զուլում ու կրակ,  
Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:  
Բայց թե ազնիվ մեր ցեղը  
Կորչելու չէ զուր տեղը,  
Ցավն էլ ունի իր դեղը:  
Այ, բերել եմ ես մի զանգ,  
Ծափ, ծլնգոց,  
Մեջը զնգոց.  
Կատվի վզից մենք կախ տանք,  
Որ ինչքան էլ օրորա,  
Որ ինչքան էլ շորորա,  
Ստից սատկի, տազ անի,  
Գալն իմանանք գազանի:  
Է, զանգը հվ կախ անի.  
- Ալո, դո՞ւ.  
- Ալին տանի:  
- Բալո, դո՞ւ:  
- Բալին կախե:  
- Չալո, դո՞ւ:  
- Չալոն կանդ է:  
- Մստո, դո՞ւ:  
Մստոն կարճ է:  
- Փստո, դո՞ւ:  
- Էդ էլ խիճճ է:  
- Համբո, դո՞ւ:  
- Ես տկար եմ:  
- Չամբո, դո՞ւ:



- Ասենք՝ տարա,  
Բա որ կատուն գա ինձ վրա՞:  
- Բտոն, խտոն թող մեկից  
Բոնեն կատվի քամակից:  
- Ինչ է խոսում չոր գանգը,  
Լավ է՝ դու տար էդ զանգը,  
Էլ ինչ Բտոն, ինչ ֆստան,-  
Ճստաց Բտոն ճստճստան:  
- Լոյիր, հանդուզն,  
Կոտորվեք դուք,  
Վախկոտներիդ ես թաղեմ,  
Ճան ասեմ, թե՛ զանգ կախեմ,-  
Գոչեց ջոջը,  
Քաշեց պոչը:

# Կարիճն ու գորտը

Սև կարիճը լճի ափին տեսավ մի գորտ,

Ասավ.- Այ գորտ, ճարպիկ լողորդ,

Ա՞ն ինձ մեջքիդ ախաղերաբար,

Առ ու լճի էն ափը տար:

Էն ինչ գորտն էր,

Քաջ լողորդ էր,

Շալակն առած սև կարիճին,

Իրեն տվեց կապույտ լճին:

Բայց կարիճը խայթեց գորտին,

Խեղճը ջրում փովեց լերդին,

Ուշքը գնաց,

Նվաղելով հայ կոկորաց.

- Կարիճ...

Դահիճ...

Ես էլ կորա...

Դու էլ կորար,

Այ անկամորդ...

Ղորտ... ղորտ... ղորտ...

- Բնությունս է էդպես, այ գորտ:

Թե չխայթեմ,

Ես կպայթեմ,-

Կարիճն ասաց,

Ինքն էլ խեղդվեց՝ ափ չհասած:



# Գայլն ու մկնիկը

Գայլը հոտից իր հանդի<sup>1</sup>  
Զարկեց տարավ մի մաքի,  
Կերավ փորն ու փսորը,  
Պառկեց մինչև կեսօրը,  
Մուկը հեռվից հոտմտաց,  
Ելավ գնաց  
Հոփիկ-թոփիկ  
Ու մի ճոթիկ  
Մսից առավ  
Ու թռավ:  
Գայլը զարթնեց,  
Իրեն ջարդեց,  
Թե՛ հայ-հարայ,  
Ալան, թալան,  
Էյ, պահապան,  
Մատնեցին,  
Վատնեցին,  
Ինչ ունեի՝ թալնեցին:

# Նապաստակի վախը

- ԱՇ նապաստակ,  
Ինչ ես փախչում  
Դու սրտաճաք,-  
Հարցրին ճամփին  
Նապաստակին:  
- Բա լուր չունե՞ք  
Դուք աշխարհիքից,  
Ինչքան ուղտ կա՝  
Պիտի պայտեն,-  
Պատասխանեց  
Նապաստակը:  
- Հոգիդ սիրես՝  
Թող կատակը.  
Ուղտ ես, ինչ է,  
Որ քեզ պայտեն:  
- Հարցնողն ով է,  
Հլա առաջ  
Մի կպայտեն,  
Գնա ու դու  
Նրանից դեն  
Նոր հաստատի,  
Որ դու ուղտ չես:

# Շուն ու ձին

Մի տան բակում շունն ու ձին  
իրար առան, վիճեցին:  
Շունը ձիուն  
թե՝ գլխիդ ձյուն,  
ինչ մեծ բան ես.  
Բեռ կտանես,  
Արտ կվարես:  
Զի, ձի խնոցի.  
Վրաս հեծի,  
Մեծ ջուրն անցի,  
Տար, դեն գցի:  
Է, թող կորչի աննշանը.  
Այ, ինչ ասեմ ինձ պես շանը.  
Ես ցերեկով տունը պահեմ,  
Ես գիշերով հոտին նայեմ...  
Զին ոտ մեկնի ինձ հավասար:-  
Զին թե՝ ճիշտ է, Հաչան Բասար,  
Ես որ հանգիստ կողքիս պառկեմ,  
Բեռ չկրեմ,  
Արտ չվարեմ,  
Տուն կլինի՞, որ դու պահես,  
Հոտ կլինի՞, որ դու նայես:

# Գորտն ու կովը

Գորտը գորտին ասավ.- Քեռի,  
Խնդրեմ՝ էս կողմ մի ետ դառի.

Տես՝ ուղել եմ,

Փուքն առնել եմ,

Ուղիղն ասա,

Կովին հասա՞:

- Զուր է, վերջ տուր,

Կովն ուր, դու ուր:

- Հիմի, քեռի,

Ուռա՞ իսկի:

- Շատ չեն զոհի,

Նույնն ես, սըսկի:

- Մի տես, քեռի...

- Նույնն ես, լոի,

Աշխարհ կանցնի,

Եթե գորտը

Կովին հասնի:

- Այ, տես, քեռի...



- Թեկուզ մեռի,  
Դու բաց աչքով

Չես դառնա կով:

Գորտը ուռավ,

Փքեց նորից,

Խիստ փուք առավ,

Ճաքեց զոհից:

Ով որ փքվի,

Նա կչքվի:



# Գայլն ու կատուն

Գայլն անտառից

Փախավ գեղը.

- Նեղն եմ, նեղը,-

Ասաց կատվին,-

Ասլան-բալա,

Քո հոր պատվին

Մի ճար արա.

Մի տես հլա,

Որսորդ ու շուն,

Թազի, թուլա

Միսս են կրծում,

Ինձ հալածում:

Այ կտրվի

Դրանց հոտը.

Մի մարդ ցոյց տուր,

Պահվեմ մոտը:

- Այ ցեղակից,- գոչեց կատուն,-

Գնա, մտիր Մարոյենց տուն.

Նա չափազանց բարի կին է:

- Ես էլ գիտեմ, որ անգին է,

Բայց որ նրա հորթն եմ կերել...


- Բկիդ կանգներ, լավ չես արել:

Այ, Դավթի մոտ. կուգես, կանչեմ:

- Նրանից էլ ես կամաչեմ.

Հենց ամառը  
Կերա Դավթի փոքրիկ գառը...  
- Ու՞մ ասեմ էլ...  
Հա, մեր Զաքին:  
- Էս գարնանն էլ  
Նրա մաքին...  
- Ո՞վ մնաց էլ.  
Հա, երեցը:  
- Էս աշնանն էլ՝  
Նրա էծը...  
- Այ դու ուտես  
Չողի մեծը:  
Քանի իսկ եղավ,  
Հինգը... վեցը...  
Այ անամոթ,  
Ինչ երեսով  
Դու գյուղ մտար.  
Ինչ է, ուրիշ  
Տեղ չգտար:

Գյուղն իհմար է,  
Որ թշնամոն  
Պատսպարե:  
Ով ինչ բրոե,  
Էն կիսրթե:



# Քամին ու մարագը

Քամին վազեց  
Արագ, արագ  
Կանգնեց, կանչեց.  
- Մարագ, մարագ,  
Հո գիտե՞ս՝ ինչ  
Ուժի տեր եմ,  
Դուռդ լայն բաց,  
Դարման բերեմ:  
Մարագը թե՝  
- Գնա՞ բանիդ,  
Ես կարոտ չեմ  
Քո դարմանիդ.  
Քո դարմանը  
Թող քեզ լինի,  
Իմ դարմանը  
Դու մի տանի:

# Ճանճը

Խոնարհ ու հեզ  
Մի հոգնած եզ,  
Արորն ուսին,  
Ճանճը պոզին,  
Մի իրիկուն  
Գալիս էր տուն:  
Մին էլ ճամփին  
Մի ուրիշ ճանճ  
Էն նստածին  
Ասավ. - Տո՛, մա՞նչ,  
Էս եզան հետ  
Որտեղից էդ:  
Քիթը տնկած  
Ճանճը ասաց.  
- Մենք որտեղից.  
Վարում էինք,  
Վարատեղից: